«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 23-01/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 30.08.2018թ. ժամը 17:00

Համաձայն 23.07.2018թ. գրությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարություն հացեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 03.08.2018թ-ին ստացված,«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Օգոստոսի 30-ին ժամը 17.00-ին՝ հետաձգված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանը
«Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Դիմումատու «ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանը չէր ներկայացել նիստին:

«Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանը գտնվում է արձակուրդում, բացակայում է ՀՀ տարածքից, այդ պատճառով ներկա չէր նիստին:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, որ 14.08.2018թ-ին նշանակվել էր նիստ, որը եհտաձգվել էր, քանի որ «Էյ Ջի Դիվելըփմենթ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանը ծանուցվել էր նիստի մասին, պատասխան էր ներկայացրել, սակայն նիստին չէր ներկայացել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սնանկության գործով կառավարիչ Կարեն Ասատրյանի բացակայության պայմաններում մի շարք հարցեր մնում էին չպարզաբանված, նիստը հետաձգվել էր 30.08.2018թ-ին: Հաշվի առնելով այն հանգմանաքը, որ Կարեն Ասատրյանը բացակայում է ՀՀ տարածքից և պատշաճ չի ծանուցվել, «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը առաջարկեց նիստը հետաձգել մեկ այլ հերթի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1.23.07.2018թ. գրությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարություն հացեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 03.08.2018թ-ին ստացված,«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գագիկ Գրիգորյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Էյ Ջի Դիվելըփմենթ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Կարեն Ասատրյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար 2018թ-ի Օգոստոսի 30-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը հետաձգել և նշանակել 05.10.2018թ-ին ժամը 15.00-ին, ք.Երևան,Արշակունյաց 5, 417 սենյակ,հասցեում:

2.Հանձնաժողովի քարտուղարին ապահովել կողմերին պատշաճ ծանուցում, հանձնաժողովի նիստի վայրի և ժամի մասին:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա. Ադամյան